ՄԿԳ.

Գ.

Գերապատիւ և գերայարգ տեառն տեառն Յովհաննու վարդապետի և սրբոյ հօր մերոյ ողջոյն խոնարհական

... ի մայիսի 22ն, ըստ նորոյն, յառաւօտու ի տասն ժամուն եղև այնպիսի երկրաշարժ, զորմէ՝ ականատես զոլով երկուցն ևս, վկայեաց ոմն թէ առաւել է այս քան զշարժն փօռթուգալին, առաջին գործ երկրաշարժիս էր շարժել որպէս յայտ է. երկրորդն և ահաւորն էր գոռացուցանել ի ներքոյ երկրի, որպիսի է որոտումն ամպոց ի յերկինս, մինչև ոմանց զառաջինն այնպէս համարիլ թէ որոտումն լինի. երրորդն էր վեր ի վայր կործանումն քաղաքիս առ հասարակ։ Ցևեաց ըստ ոմանց 4. ըստ ոմանց 6. և ըստ ոմանց այլ աւելի թաքիքէս. ի վայրկենի դադարման շարժին ոչ երևիւր քաղաքն ի փոշւոյ աւերակացն, ի նոյն վայրկեանս շարժին կործանեցաւ ահաւոր ճամին սուլթան մէհէմէտին բովանդակ, մնալով ի ներքոյ ըստ ոմանց 300 անձանց, և ըստ այլոց նուազ իբր 60։ Երկրորդ կործանեցաւ վէզիրխանն մնալով ի ներքոյ ըստ ոմանց 40, իսկ ըստ այլոց և ևս աւելի անձանց. կործանեցաւ շիշէճիլէր խանն մնալով նմանապէս ի ներքոյ բազմութեան անձանց, խախտեալ ըստ ամենայնի քանդեցաւ ըստ մասին զօֆճի խանն. եղծեալ քայքայեցաւ առ հասարակ ճէվահիր պէզէստէնն. խախտեալ մնասեցաւ ըստ մասին սանտալ պէզէստէնն. խախտեալ ճեղքեալ անպիտանացան ամենայն կամարք խուլումճոց և որ շուրջ զնոքօք. և ի համառօտն փութացեալ, բաց ի եէնի խանէն, այլ ամենայն խանից կէսք կործանեցան, և կէսք ճեղքուտեալ և մնասեալ կասկածելի եղեն առ բնակութիւն. նմանապէս ի մզկթաց անմնասն ըստ ամենայնի է միայն մզկիթն որ ի մէջ շարշրին։ Ցէտիրնէ խաբուի մզկթի՝ զվերին մասն գմբէթին հանդերձ գագաթամբն ի վեր ոստուցեալ և հատեալ, գլխի վայր վերստին դարձուցանէ յառաջին տեղին, ի զարմացումն տեսողաց. մինարէից գրեթէ կէսն կործանեցաւ, մնացեալքն մնասեցան, սակաւք են անմնաքն. ի վախճանի ամենայն քարաշէնք ստամպօլու ըստ մեծագոյն մասին կործանեցաւ և որ ինչ մնացին մնասեցան և կարօտին նորոգութեան. պարիսպք քաղաքին ի բազում տեղիս կործանեցաւ, և ի բազում տեղիս ևս ճեղքեալ թեքեցան. ի փայտակերտիցն հազիւ զմին ի տասանց եթող ողջս և անարատս. եկեսցուք ի սամաթիայ, որոյ յերկոսին կողմանս դրանն կործանեցան պարիսպքն, յորոյ ի կողմն կայր աղբիւր ջրոյ, և ջաղացք ցորենոյ ոլք կործանեցան ընդ պարսպին, և մնացին ի ներքոյ աւերակին ջրկիրքն, և ձիք ջաղացքին և այլ անձինք և մանկունք պատճառաւ ջրոյն, ի միւս կողմն էր բեռնակրաց, յորոց ոմանք մնացին ի ներքոյ և բազում ձիք բեռնակրաց... ի ներքս սամաթիոյ, սկսեալ ի դրանէ նորա մինչև ի եէտի խուլէն բոլորովին եղև աւերակ, և հազիւ ոչ միայն ի քարակերտից, այլ և ի փայտակերտիցն զմի ի հարիւրոց գտցես ողջս. կործանեցաւ մին ի եէտի խուլուէից, և մին ևս կործանեցաւ և քայքայեցաւ պարութխանն. ի խալաթիայ սակաւ գտցես տունս անմնասս, այլ ոչ որպէս զսամաթիային. քարակերտք խալաթիոյ ևս բազումք կործանեցան և մնասեցան, այլ ոչ որպէս զկոստանդնուպօլսին. մնասեցաւ չարաչար խալաթայ պէզէստէնն, մնասեցաւ չարաչար և մեծամեծ ճեղքուածս ընկալաւ խուռչունլու խանն... ընկալաւ ճեղքուածս երևելիս այլ անմնասս խալաթայ խուլէսին. խուռչունլուի խուլէն ըստ մասին կործանեցաւ. մնացեալն ևս քակելի է... յետ նոյն շարժին եղև այնպիսի սաստիկ անձրև, զի ի յորդութենէ ջուրց ի պախճայ խաբուն խեղդեցաւ ձի մի, որ կապեալ կար անդր, զի առ ի չգոյէ անցից ջուրց յաւելակացն կուտելոց անդր, դիզացաւ ջուրն իբրև զգետ։ Արդ մինչև ցայժմ տևէ երկրաշարժն, թէպէտ ոչ նովին սաստկութեամբ. և յաւուրս յայսոսիկ ի վերստին շարժելն,